Ռիսկ ռադարի և ջերմային քարտեզների 2025 թ. թարմացված արդյունքներ

Ռիսկ ռադարը և ոլորտային ջերմային քարտեզները օգնում են բացահայտել բնապահպանական, սոցիալական և կառավարման (ԲՍԿ) ռիսկերի, ինչպես նաև կլիմայական ռիսկերի կենտրոնացումը ֆինանսական համակարգում: Ռիսկ ռադարի միջոցով տնտեսության յուրաքանչյուր ոլորտ (ըստ NACE դասակարգչի) գնահատվում է երեք խմբի ռիսկերով՝ ֆիզիկական կլիմայական ռիսկեր, անցումային կլիմայական ռիսկեր և այլ ԲՍԿ ռիսկեր: Յուրաքանչյուր խումբ գնահատվում է 0–4 միավորով, ոլորտի ընդհանուր գնահատականը կարող է լինել առավելագույնը 12: Ըստ ընդհանուր գնահատականի՝ ջերմային քարտեզում ոլորտները բաշխվում են խմբերի՝ բարձր ԲՍԿ ռիսկեր (7–9), բարձր խոցելի (5–6), խոցելի (3–4) և ցածր ԲՍԿ ռիսկեր (1–2), այնուհետև որոշվում է դրանց տեսակարար կշիռը ընդհանուր վարկային պորտֆելում:

Գնահատման հիմքում 2025 թվականի դեկտեմբերի տվյալներով (ՀՀ ԿԲ վիճակագրություն) առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերն են ըստ ոլորտների: Ֆիզիկական անձանց տրամադրված հիփոթեքային և սպառողական վարկերը ոլորտային գնահատման մեջ ներառված չեն:

Հիմնական արդյունքներ (2025 թ. դեկտեմբերի տվյալներով)

Բանկերի վարկային պորտֆել, մլրդ դրամ	Բարձր ԲՍԿ ռիսկեր, բանկեր	Վարկային կազմակերպությունների պորտֆել, մլրդ դրամ	Բարձր ԲՍԿ ռիսկեր, վարկային կազմակերպություններ
7 786	**22.4%**	**407**	**33.6%**
+22.6% նախորդ տարվա համեմատ	նախորդ տարի՝ 21.5%	+17.8% նախորդ տարվա համեմատ	նախորդ տարի՝ 35.4%

2025 թվականի դեկտեմբերի տվյալներով բանկերի վարկային պորտֆելը կազմել է 7,786.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակի համեմատ աճելով 22.6%-ով, իսկ վարկային կազմակերպություններինը՝ 406.7 մլրդ դրամ (աճը՝ 17.8%): Բանկերի պորտֆելի բաշխումն ըստ ԲՍԿ ռիսկի խմբերի գրեթե չի փոխվել, իսկ վարկային կազմակերպությունների պորտֆելում բարձր ռիսկային ոլորտների կշիռը նվազել է:

Ռիսկ ռադար. առավել ռիսկային ոլորտներ

Գծապատկեր 1-ում ներկայացված են բարձր ԲՍԿ ռիսկի գնահատական և պորտֆելում էական կշիռ ունեցող ոլորտները: Դրանցից ամենաբարձր գնահատականն ունի ոչ բազմամյա մշակաբույսերի աճեցումը (8.6), որին հաջորդում են էլեկտրաէներգետիկան և տրանսպորտը (8.4-ական): Բանկերի պորտֆելում այս ոլորտներից ամենամեծ տեսակարար կշիռն ունի շինարարությունը (11.0%), թեև դրա գնահատականը համեմատաբար ցածր է (7.2):

Գծապատկեր 1. Առավել ռիսկային ոլորտների ԲՍԿ ռիսկի գնահատականը՝ ըստ բաղադրիչների



Բանկերի ջերմային քարտեզի արդյունքներ

Գծապատկեր 2-ում ներկայացված է ԲՍԿ ռիսկի յուրաքանչյուր խմբի տեսակարար կշիռը բանկերի վարկային պորտֆելում 2025 թվականի դեկտեմբերի տվյալներով: Նախորդ տարվա համեմատ բարձր և ցածր ԲՍԿ ռիսկեր ունեցող ոլորտների տեսակարար կշիռները աճել են 0.9 տոկոսային կետով, իսկ բարձր խոցելի և խոցելի ոլորտներինը՝ նվազել:

Բարձր ռիսկային խմբում ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում շինարարության ոլորտին (11.0%), որին հաջորդում են ոչ բազմամյա մշակաբույսերի աճեցումը (3.4%), էլեկտրաէներգետիկան (2.7%) և հանքարդյունաբերությունը (2.2%): Խմբի կշռի աճը հիմնականում պայմանավորված է երկու ոլորտով՝ շինարարության վարկերը 660.7 մլրդ դրամից հասել են 860.0 մլրդ դրամի (կշիռը՝ 10.4%-ից 11.0%), իսկ էլեկտրաէներգետիկայինը՝ 143.6 մլրդ դրամից 212.5 մլրդ դրամի (2.3%-ից 2.7%): Հանքարդյունաբերության (2.2%) և տրանսպորտի (1.1%) տեսակարար կշիռները գրեթե չեն փոխվել, իսկ գյուղատնտեսության տեսակարար կշիռը մի փոքր նվազել է՝ 5.4%-ից 5.2% (վարկերը բացարձակ արժեքով աճել են 17.0%-ով):

Գծապատկեր 2. Բանկերի ջերմային քարտեզ



Խումբ	Ոլորտ	Կշիռը, 2025 դեկ.	Կշիռը, 2024 դեկ.	Խմբի կշիռը, 2025 դեկ.	Խմբի կշիռը, 2024 դեկ.
7-9	Շինարարություն	11.0%	10.4%	22.4%	21.5%
	Գյուղատնտեսություն. ոչ բազմամյա մշակաբույսերի աճեցում	3.4%	3.7%		
	Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու մատակարարում և օդորակում	2.7%	2.3%		
5-6	Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	7.9%	7.5%	13.9%	14.1%
	Կացության և սննդի սպասարկման գործունեություն	2.7%	2.9%		
	Սննդամթերքի արտադրություն	1.0%	1.1%		
3-4	Մեծածախ և մանրածախ առևտուր	9.4%	9.9%	12.9%	13.7%
	Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	1.5%	1.6%		
	Տեղեկատվություն և հաղորդակցություն	0.8%	1.1%		
1-2	Ծառայության ոլորտի այլ գործունեություն	5.3%	4.4%	5.8%	4.9%
	Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	0.4%	0.5%		
	Կրթություն	0.1%	0.1%		
	Չգնահատված (սպառողական և հիփոթեքային)	45.0%	45.7%	45.0%	45.7%

Յուրաքանչյուր խմբում ներկայացված են պորտֆելում ամենամեծ կշիռ ունեցող երեք ոլորտները, աջ սյուներում՝ խմբի ընդհանուր կշիռը:

Վարկային կազմակերպությունների ջերմային քարտեզի արդյունքներ

2025 թվականի դեկտեմբերի տվյալներով վարկային կազմակերպությունների վարկային պորտֆելը (առանց վերաֆինանսավորող վարկային կազմակերպությունների վարկերի) կազմել է 406.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 17.8%-ով: Գծապատկեր 3-ում ներկայացված է ԲՍԿ ռիսկի յուրաքանչյուր խմբի տեսակարար կշիռը վարկային կազմակերպությունների վարկային պորտֆելում: Նախորդ տարվա համեմատ բարձր ԲՍԿ ռիսկեր ունեցող ոլորտների տեսակարար կշիռը նվազել է 1.8 տոկոսային կետով, իսկ ցածր ԲՍԿ ռիսկեր ունեցող ոլորտներինը կրկնապատկվել է (4.7%-ից հասնելով 9.3%-ի):

Վարկային կազմակերպությունների պորտֆելում բարձր ԲՍԿ ռիսկեր ունեցող ոլորտների կշիռը զգալիորեն ավելի մեծ է, քան բանկերինը, ինչը հիմնականում պայմանավորված է դրանց վարկավորման ուղղվածությամբ. պորտֆելի 20.3%-ը կազմում են գյուղատնտեսության ոլորտի վարկերը: Բարձր ռիսկային խմբում ամենամեծ կշիռն ունեն ոչ բազմամյա մշակաբույսերի աճեցումը (10.5%), շինարարությունը (7.8%) և անասնապահությունը (6.1%): Այս խմբի տեսակարար կշռի նվազումը հիմնականում պայմանավորված է շինարարության ոլորտով, որի վարկերը 33.2 մլրդ դրամից նվազել են 31.6 մլրդ դրամի (կշիռը՝ 9.6%-ից 7.8%), ինչպես նաև գյուղատնտեսության տեսակարար կշռի նվազմամբ (21.8%-ից 20.3%), թեև այդ ոլորտի վարկերը աճել են 75.3 մլրդ դրամից 82.4 մլրդ դրամի: Միևնույն ժամանակ էլեկտրաէներգետիկայի կշիռն աճել է 0.5%-ից 1.7% (1.8 մլրդ դրամից 6.9 մլրդ դրամ): Ցածր ԲՍԿ ռիսկեր ունեցող ոլորտների կշռի աճը հիմնականում պայմանավորված է այլ ծառայությունների ոլորտով, որի վարկերը 14.7 մլրդ դրամից հասել են 36.0 մլրդ դրամի (4.3%-ից 8.9%):

Գծապատկեր 3. Վարկային կազմակերպությունների ջերմային քարտեզ



Խումբ	Ոլորտ	Կշիռը, 2025 դեկ.	Կշիռը, 2024 դեկ.	Խմբի կշիռը, 2025 դեկ.	Խմբի կշիռը, 2024 դեկ.
7-9	Գյուղատնտեսություն. ոչ բազմամյա մշակաբույսերի աճեցում	10.5%	11.0%	33.6%	35.4%
	Շինարարություն	7.8%	9.6%		
	Գյուղատնտեսություն. անասնապահություն	6.1%	6.9%		
5-6	Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	7.4%	7.5%	17.4%	19.7%
	Սննդամթերքի արտադրություն	4.1%	5.2%		
	Խմիչքների արտադրություն	1.9%	2.2%		
3-4	Մեծածախ և մանրածախ առևտուր	8.0%	8.8%	12.6%	12.8%
	Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	2.6%	2.2%		
	Տեղեկատվություն և հաղորդակցություն	0.6%	0.4%		
1-2	Ծառայության ոլորտի այլ գործունեություն	8.9%	4.3%	9.3%	4.7%
	Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	0.4%	0.4%		
	Կրթություն	0.1%	0.0%		
	Չգնահատված (սպառողական և հիփոթեքային)	27.1%	27.4%	27.1%	27.4%

Յուրաքանչյուր խմբում ներկայացված են պորտֆելում ամենամեծ կշիռ ունեցող երեք ոլորտները, աջ սյուներում՝ խմբի ընդհանուր կշիռը: Հաշվարկում չեն ներառվել վերաֆինանսավորող վարկային կազմակերպությունների («Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ և «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ) վարկերը (2025 թ. դեկտեմբերին՝ 239.1 մլրդ դրամ, 2024 թ. դեկտեմբերին՝ 227.2 մլրդ դրամ), քանի որ դրանք հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորում են:

Հիմնական եզրահանգումներ

Բանկերի վարկային պորտֆելի արագ աճի պայմաններում դրա բաշխումն ըստ ԲՈՒԿ ռիսկի խմբերի մնացել է կայուն. բարձր և ցածր ԲՈՒԿ ռիսկեր ունեցող ոլորտների տեսակարար կշիռներն աճել են հավասարապես: Վարկային կազմակերպությունների մոտ տեղաշարժն ավելի ակնհայտ է՝ բարձր ռիսկային ոլորտների կշիռը նվազել է, իսկ ցածր ռիսկայիններինը՝ կրկնապատկվել:

Միևնույն ժամանակ բանկերի պորտֆելում շինարարության և էլեկտրաէներգետիկայի վարկերի աճը գերազանցել է պորտֆելի ընդհանուր աճը: Էլեկտրաէներգետիկայի ոլորտային գնահատականը չի տարբերակում վերականգնվող և հանածո էներգետիկայի նախագծերը, ուստի այս աճի կառուցվածքի մասին ավելի հստակ պատկերացում կտա վարկառուի մակարդակում գնահատումը: Վարկային

կազմակերպությունների համար հատկապես կարևոր է գյուղատնտեսության վարկերի ֆիզիկական կլիմայական ռիսկերի կառավարումը, քանի որ այդ ոլորտին բաժին է ընկնում դրանց պորտֆելի մոտ հինգերորդ մասը: Այս ուղղություններում նպատակահարմար է շարունակել կլիմայական ռիսկերի հետևողական գնահատումը: